ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2214, Կոտայքի մարզ,գ.Նուռնուս. Գլխավոր փողոց թիվ 15, Հեռախոս 094 31 39 77, Էլ. փոստ՝ nurnus.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 սեպտեմբերի 2017 թվականի N 70-Ա

ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի նոյեմբերի 5-ին հերթական ընտրություններ նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 59-Ա և ,,Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ նշանակելու մասին,, Կոտայքի մարզպետի 2017 թվականի հուլիսի 11-ի N 147-Ա որոշումները, որոշում եմ՝

1. 2017 թվականի նոյեմբերի 5-ին տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություն անցկացնելու նպատակով Կոտայքի մարզի Նուռնուս համայնքում կազմավորել մեկ ընտրական տեղամաս, հասցե՝ գյուղ Նուռնուս, Գլխավոր փողոց թիվ 9, միջնակարգ դպրոց:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2017թ. սեպտեմբերի 19
գ. Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2214, Կոտայքի մարզ,գ.Նուռնուս. Գլխավոր փողոց թիվ 15, Հեռախոս 094 31 39 77, Էլ. փոստ՝ nurnus.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 սեպտեմբերի 2017 թվականի N 71-Ա

ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՋՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, որոշում եմ.

1. 2017 թվականի նոյեմբերի 5-ին տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություն անցկացնելու նպատակով Նուռնուս համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Նուռնուս համայնք, Գլխավոր փողոց թիվ 13՝ 20ք.մ

2) Նուռնուս համայնք, Գլխավոր փողոց թիվ 27՝ 6ք.մ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2017թ. սեպտեմբերի 19
գ. Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2017 թվականի N 72 - Ա

ԳԵՎՈՐԳ ԱՐԹՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի պահանջներով ու հիմք ընդունելով Գեվորգ Արթուրի Հակոբյանի, իրեն սեփականության իրավունքով պատկանող /սեփականության վկայական N 03022015-07-0019/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Սևան,, այգեգործական ընկերության 6-րդ թաղամասի թիվ 51 հողամասում իր կողմից 2017 թվականին ինքնակամ կառուցված S=197,23 ք.մ. մակերեսով շինությունների օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «Գույքաչափ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Գեվորգ Արթուրի Հակոբյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Սևան,, այգեգործական ընկերության 6-րդ թաղամասի թիվ 51 այգեգործական հողամասում իր կողմից 2017 թվականին ինքնակամ կառուցված S=197,23 ք.մ. մակերեսով շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=197,23 ք.մ.մակերեսով հավաբունն ինքնակամ կառուցվել է 2017 թվականին ապա նրա օրինականացման համար համայնքի բյուջե վճարել 130 171 /հարյուր երեսուն հազար հարյուր յոթանասունմեկ/ դրամ:

3. Գեվորգ Արթուրի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության վկայական N 03022015-07-0019/, 07-051-0152-0002-001 կադաստրային ծածկագրով այգետնակին և հողամասին տրամադրել իրավաբանական հասցե. գ.Նուռնուս, ,,Սևան,, թաղամաս, 6-րդ փողոց, թիվ 51:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նշված գումարը համայնքի բյուջե վճարելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 սեպտեմբերի 2017թ
գ Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, (0222) 6-84-51nurnus.kotayq@mta.gov.am

20 սեպտեմբերի 2017 թվականի N 73-Ա

ՍԱՐԳԻՍ ԻՇԽԱՆԻ ԱՂԱՄԱԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի, ,,Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին,, Սարգիս Իշխանի Աղամալյանի՝ իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Միկրոբ,, այգեգործական ընկերության թիվ 54 հասցեի հողամասում իր կողմից 1984 և 2003 թվականներին ինքնակամ կառուցված 43,16 քմ մակերեսով շինությունների օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «Գույքաչափ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1 Սարգիս Իշխանի Աղամալյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Միկրոբ,, այգեգործական ընկերության թիվ 54 հասցեի հողամասում իր կողմից 1984 և 2003 թվականներին ինքնակամ կառուցված 43,16 քմ մակերեսով շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=41,76 ք.մ.մակերեսով կիսանկուղը կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից առաջ ապա նրա օրինականացման համար վճար չգանձել իսկ S=1,40ք.մ.մակերեսով զուգարանը ինքնակամ կառուցվել է 2003 թվականին ապա նրա օրինականացման համար համայնքի բյուջե վճարել 924 /ինը հարյուր քսանչորս/ դրամ:

3. Ճանաչել Սարգիս Իշխանի Աղամալյանի սեփականության իրավունքը վերջինիս պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Միկրոբ,, այգեգործական ընկերության թիվ 54 հասցեում գտնվող 500քմ-ից ավել օգտագործվող 6,97 քմ, հողամասի նկատմամբ՝ այն անհատույց տրամադրելով իրեն.

4. 07-051-0101-0091 կադաստրային ծածկագրով հողամասին և այգետանը տրամադրել իրավաբանական հասցե. Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, ,,Միկրոբ,, թաղամաս, 1-ին փողոց, թիվ 54:

5.Սույն որոշումն ուժի մեջ է նշված գումարը համայնքի բյուջե վճարելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գ.Նուռնուս
20 սեպտեմբերի 2017թ.